ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԾՁԲ-20-4/3-8 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30 .04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ-Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 03.04.2020թ. կնքված № ԲՄԾՁԲ-20-4/3-8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների և պահեստամասերի միավորի գները սահմանված են Պայմանագրով:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 19100000 (տասնինը միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն Կատարած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 1 էջից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ֆլեշ-Մոտորս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31
ՀՀ ՖՆ և գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/հ 900011144079	Հ/Հ 15100192455310100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00873228
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԼԱԼԱՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԾՁԲ-20-4/3-8 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

Ծառայությունների գնման ժամանակացույց

Ծառայության							
Հ/Հ	Չ/h	անվանումը	Չ/մ	Քանակը	Կատարողին վճարվող գումարի գործակից	Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Մատուցման ժամանակացույց
1	8	MITSUBISHI PRESTIG 2009 MITSUBISHI PADGERO 1995	դրամ	1	0.679	1600000	Ծառայությունների մատուցումը 2020թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ: Ըստ ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության հայտերի:
2	11	NISSAN X-TERRA, NISSAN - X TRAIL	դրամ	1	0.519	1500000	
3	12	NISSAN NAVARA	դրամ	1	0.519	5000000	
4	13	NISSAN PATROL 2005	դրամ	1	0.519	3000000	
5	18	TOYOTA PRADO 2.8D, PRADO 2.7D , TOYOTA RAV-4,TOYOTA LEND CRUISER	դրամ	1	0.398	8000000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ տնօրեն

[illegible]ԱԼՅԱՆ

Հավելված N 2
N ԲՄԾՁԲ-20-4/3-8 պայմանագրին կից 1 Համաձայնագրի

Ծառայությունների վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Հ/Հ	Չ/h	CPV կոդ	Ծառայության անվանումը	Չ/մ	Քանակը	Վճարումը կիրականացվի 2020թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝								
						ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20.12.20թ
1	8	50111130/535	MITSUBISHI PRESTIG 2009 MITSUBISHI PADGERO 1995	դրամ	1	533000	533000	533000	1066000	1066000	1066000	1600000	1600000	1600000
2	11	50111130/544	NISSAN X-TERRA, NISSAN - X TRAIL	դրամ	1	500000	500000	500000	1000000	1000000	1000000	1500000	1500000	1500000
3	12	50111130/537	NISSAN NAVARA	դրամ	1	1666000	1666000	1666000	3332000	3332000	3332000	5000000	5000000	5000000
4	13	50111130/545	NISSAN PATROL 2005	դրամ	1	1000000	1000000	1000000	2000000	2000000	2000000	3000000	3000000	3000000
5	18	50111130/546	TOYOTA PRADO 2.8D, PRADO 2.7D , TOYOTA RAV-4,TOYOTA LEND CRUISER	դրամ	1	2666000	2666000	2666000	5332000	5332000	5332000	8000000	8000000	8000000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ
Ն. ՑՈՒԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ տնօրեն
Ա. ԱԼԱՅԱՆ